Պարույր Սևակ

Լեռնաշխարհ

Այնտեղ սողում է բիլ շամանդաղը
Ու կիսով ծածկում ցից Յամանդաղը:
Արաքսը անցած վայրի հովազը
Թաքնահարում է խաղողի վազը:
Քամին անտառի մազերն է գզում,
Կիրճերում ոռնում, փչակում հազում:
Լեռնային գետը թոչում է տեղից՝
Կարծես իր անտես որսի ետևից:
Իսկ մարդը... Մարդը քար ու քարափում
Բովանդակ տարին քրտինք է թափում,
Որ զուր չկորչի և ոչ մի պուտ ջուր,-
Պուտ-պուտ շոր հագնի աղջիկն իր պուճուր.
Եվ ոչ մի հատիկ չմնա դաշտում,
Որ հաց ունենա իր տղան տաշտում.
Եվ ոչ մի ողկույզ չմնա այգում,
Որ մայրն ունենա տաքուկ վերարկու:
Որ ընդունիչը ձմեռվա ցրտում
Դրվատի վաստակն ու ջանքը մարդու
Եվ, բացի խինդից ու առատ բերքից,
Մեմ-մեկ էլ մարդու... հոգսերից երգի...

15.VIII.1956թ.

Չանախչի